Վ. Եհափառ Կաթողիկոսը բարեհաճեցաւ խաչաձև մի զմրուխտ ակնակու ո Աստանի շնորհել Ս. Պօլսոյ Պատրիարքական Տեղապահ Գերապատիւ Եպիսկոպոսին յաղագս հաւատարիմ և անձնանուէր ծառայութեանցն Եկեղեցւոյս Հայոց։

Նոր-Նախիջեւանայ Մարդասիրական Ընկերութեան առ Վ. Եհափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց ներկայացուցած անցեալ 1868 ամի Յայտարարութիւնը եւ Հաշիւը։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

Տեառն Տեառն Գէորգայ Դ. Սրբազնագոյն Կաթողիկոսի ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարգի Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի

Ի Հոգաբարձուաց Մարդասիրական Ընկերութեան Հայոց Նոր-Նախիջեւանի

Յայտարարութիւն

Ըստ ԺԵ. յօդուածոյ Սահմանաց Մարդասիրական Ընկերութեան, հաստատելոց Ի Սրբութենէ Ձերմէ, պարտք անհրաժեշտ լինելով Հոգաբարձուացս տալ զուարկեան հաշիւ մտից և ելից արդեանց Ընկերութեան յիւրաքանչիւրում ամի, և սա և գործոցութեանց եղելոց Ի տարւոջ, շնորհ կալաք յԵթներորդի աւուր ամենանուն ապրիլի տարւոյս ներկայացուցանել առաջի ընդհանուր ժողովոյ պատուական Ընդամոց Ընկերութեան զհաշիւ անցելոյ 1868 ամի, պարզելով Ի նմին մանրամասնաբար զմուտս և զելս արդեանց, զնուիրագործութիւնս ամենց յանգամոց յօգուտ Ընկերութեան և Յառանգաւորաց զպրոցին սրբոյ Խաչի Վանուց քաղաքիս և յիշատակելով կարճօրէն զգործողութեանց եղելոց Ի նմին տարւոջ Ի մասին բացման զպրոցին այնորիկ և զյառաջադիմութենէ աշակերտաց նորին։

Օրինաւոր պատճէն բոմանդակ հաշուոյն այնորիկ վաւերացուցեալ մերով ստորագրութեամբ շնորհ ունիմք ամենախոնարհաբար և յարդանօք բաղձք մատուցանել ընդ այսմ Ձերում Աստուածընտիր Վ. Եհափառութեան և յոյժ առնել, զի յօրէ բացման Յառանգաւորաց զպրոցին մինչ ցայս վայր ժամանակի ամէն յայտնի տեսանի Ի մոյ կողմանէ Ջանասիրութիւն դաստատուաց մանկանց, և Ի միւսմէ կողմանէ զովելի յառաջադիմութիւն աշակերտաց յուսմունս և Ի բարեկրթութեան. և յուսալի է անտարակոյս, Վ. Եհափառ Տէր, զի ընդ քաղցր հովանաւորութեամբ Սրբութեան Ձերոյ զպրոցն այն յառաջացի և աշակերտք նորին զարդասցին յուսմունս բարեկրթութեան։

Եւ քանզի ըստ զօրութեան ԺԵ. յօդվածոյ Սահմանաց Ընկերութեան՝ տարեկան հաշիւ գումարաց և գործողութեանց նորին հարկ, տպագրել յօրագիրս վասն ընդհանուր տեղեկութեան, վասնորոյ ամենախոնարհաբար խնդրեմք Ի Սրբութենէ Ձերմէ, զի բարեհաճեսջիք հրամայել ում հարկն է, հրատարակել զհաշիւ Ընկերութեանս տպագրութեամբ յԱրարատ ամսագրոյն։

Ձերոյդ Աստուածասէր Օծութեան

խոնարհ ծառայք

Խաչատուր բահանայ Զարիֆեանց
Եղիսեան Յակոբեան Պողոսեանց
Օհան Զուլպասեանց
Պարոն Պոմբեանց
Յովակիմ Խաչիկեան
Միքայէլ Կարապետեանց
Յովհաննէս Սարգիսեանց
Յովհաննէս Պապասենեան

Համար 18

Ի 22 մայիսի 1869 ամի եւ Ազգ. ՌՅԺԸ

Ի Նոր-Նախիջեւան։